

ՁԵԿՈՅՑ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

Հ. Բ. Ը. Միութեան 57րդ Ընդհանուր Ժողովին Նախագահ Տիար Ա. Մանուկեանի արտասանած փակման խօսքը, որուն մէջ ան կը յայտնէր իր որոշումը 1971էն սկսեալ չստանձնելու Միութեան նախագահութիւնը, իոր յուզումի եւ անդռհանքի մատնեց Միութեան ղեկավարութիւնը, անդամակցութիւնը եւ Հայաշխարհը:

Տիար Ա. Մանուկեանի նախագահութիւնը Միութեան եւ ազգին համար հանդիսացաւ Հայ Սրտին տրոփը կրող եւ Հայ Մտքին շողերով գեղապայծառ ծրարութի, բարեգործութեան, շինարարութեան եւ առաջնորդութեան 17 տարիներու բացառիկ շրջան մը: Կարելի չէր, հետեւաբար, հաշտուիլ իր ներկայութեան իսկ Միութեան ղեկէն դինք հեռացած տեսնելու գաղափարին հետ:

Աղետարեր որոշում մըն էր, որուն ի լուր՝ մամուլ, կազմակերպութիւններ, մարմիններ, ակնաւոր դէմքեր, անգամներ թէ խոնարհ ազգայիններ՝ աշխարհի չորս ծագերէն, խմբագրականներով, նամակներով, հեռագրով եւ հեռաձայնային հաղորդակցութեամբ, որոնց թիւը հարիւրներու կը հասնի, համահայկական հողեշարժ ցոյցով մը խնդրեցին նախագահէն ետ առնել իր որոշումը:

Որքան խոր էր մեր սրտաբեկումը շուրջ երկու ամիս առաջ, նոյնքան անպարագրելի է մեր բերկրանքը այսօր երբ կը փութանք աւետելու հանրութեան, թէ նախագահ Տիար Ա. Մանուկեան՝ Պատ. Կեդր. Վարչ. Ժողովի փետրուար 9ի նիստին մէջ յայտնեց, որ անկեղծութեամբ թաթաւուն խնդրանքները հարկադրեւ էին դինք վերաքննելու իր որոշումը, հակառակ հանգստեան կոչուելու իր բուն փափաքին:

Ժողովը մեծ ուրախութեամբ դիմաւորեց նախագահին յայտարարութիւնը եւ ընթացք տալով 57րդ Ընդհ. Ժողովի յանձնարարութեան, զինք յայտարարեց Կեդր. Վարչ. Ժողովի ՅԿԵԱՆՍ ԱՆԴԱՄ ԵՒ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՅԿԵԱՆՍ ՆԱԽԱԳԱՀ:

Նախագահին վերանորոգ յանձնառութիւնը նոր եւ խոշոր զոհողութիւն մըն է անկասկած իր կողմէ, զոր Միութեան անդամակցութիւնը մասնաւորաբար եւ Հայ Ժողովուրդը ընդհանրապէս երախտագիտութեամբ պիտի յիշեն միշտ:

Հիմա որ փարատած է մեր վրայ ճնշող տխրութիւնը, քաղցր պարտականութիւն կը զգանք սրտազին շնորհակալութիւն յայտնելու Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա.ին, Միութեան Յանձնաժողովներուն եւ Մասնաժողովներուն, ազգային եւ մշակութային կազմակերպութեանց, Հայ մամուլի այն անդամներուն եւ այն ազգայիններուն, որոնց համակրանքի սրտազրաւ արտայայտութիւնները մեծ չափով նպաստեցին նախագահ Տիար Ա. Մանուկեանը ցվերջ ի դլուխ Հ. Բ. Ը. Միութեան ունենալու մեր բուն ցանկութեան իրագործումին:

ԴԻՒԱՆ ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻ

Նիւ Եորք,
փետրուար 12, 1971